ՀԱՄԱՁԱՅՆԱԳԻՐ № 3
№ ՀԲՄԾՁԲ-7/2-1 ԳՆՄԱՆ ՊԱՅՄԱՆԱԳՐԻ

ք. Երևան 02-ը ապրիլի 2019թ.

ՀՀ պաշտպանության նախարարությունը, ի դեմս ՀՀ պաշտպանության նախարարի տեղակալ Մ. Ղամբարյանի, ով գործում է նախարարության կանոնադրության հիման վրա՝ այսուհետև Պատվիրատու, մի կողմից և «Կապանի հաց» ՍՊԸ-ն՝ ի դեմս ընկերության տնօրեն Ռ.Աթաջանյանի, ով գործում է ընկերության կանոնադրության հիման վրա, այսուհետև՝ Կատարող, մյուս կողմից, հիմք ընդունելով 07.03.2018թ. կնքված № ՀԲՄԾՁԲ-7/2-1 գնման պայմանագրի (այսուհետև՝ Պայմանագիր) 7.13 կետը, փոխադարձ համաձայնությամբ կնքեցին սույն Համաձայնագիրը (այսուհետև՝ Համաձայնագիր) հետևյալի մասին.

1. Համաձայնագրի առարկան

1.1 Սույն Համաձայնագրով կողմերը որոշեցին Կապանի տարածաշրջանի հացաթխման ծառայության մատուցման միավորի գինը նվազեցնել և սահմանել 100 ՀՀ դրամ:

1.2 Սույն Համաձայնագրով Կատարողը պարտավորվում է Պայմանագրով սահմանված կարգով և ձևով Պատվիրատուին կամ նրա կողմից որոշված Ստացողին (այսուհետև՝ Ստացող) մատուցել Պայմանագրի N 1 Հավելվածով՝ Տեխնիկական բնութագրով նախատեսված հացաթխման ծառայություն (այսուհետև՝ Ծառայություն), իսկ Պատվիրատուն (Ստացողը) պարտավորվում է ընդունել այդ Ծառայությունը և վճարել դրա համար:

2. Համաձայնագրի գինը և վճարման կարգը

2.1 Կատարողի կողմից մատուցվելիք Ծառայության միավորի գինը ներկայացված է Համաձայնագրի անբաժանելի մասը կազմող Հավելված N 1-ում: Համաձայնագրի ընդհանուր գինը կազմում է **5 100 000 (հինգ միլիոն մեկ հարյուր հազար) ՀՀ դրամ**, որը ներառում է Կատարողի կողմից իրականացվող բոլոր ծախսերը՝ այդ թվում հարկերը, տուրքերը և ՀՀ օրենդրությամբ սահմանված այլ վճարները:

2.2 Պատվիրատուն մատուցված Ծառայության դիմաց վճարումը կատարում է Պայմանագրի 4.2 կետին համապատասխան, բայց ոչ ուշ, քան 20.12.2019թ (Հավելված N 2):

3. Այլ պայմաններ

3.1. Սույն Համաձայնագիրը հանդիսանում է Պայմանագրի անբաժանելի մասը, ուժի մեջ է մտնում կողմերի ստորագրման պահից և գործում է մինչև կողմերի փոխադարձ պարտավորությունների լրիվ կատարումը: Համաձայնագրի (պայմանագրի) պայմանները կիրառվում են պայմանագիրը կնքելուց հետո մինչև դրա հիման վրա համաձայնագիր կնքելը կողմերի միջև փաստացի ծագած հարաբերությունների նկատմամբ: Ընդ որում պայմանագիրը կնքելուց հետո մինչև դրա հիման վրա համաձայնագիր կնքելը Վաճառողի կողմից ծառայության մատուցման դիմաց վճարումն իրականացվում է այդ համաձայնագիրը, ինչպես նաև պայմանագիրը ՀՀ ֆինանսների նախարարության կողմից հաշվառված լինելու դեպքում:

3.2 Սույն Համաձայնագրում չնշված՝ գնման Պայմանագրով նախատեսված դրույթները, պայմանները, Կողմերի իրավունքները և պարտականությունները, Ծառայության մատուցման, հանձնման-ընդունման, Կողմերի պատասխանատվության հետ կապված և այլ հարաբերություններ թողնվում են անփոփոխ:

3.3. Սույն Համաձայնագրի կապակցությամբ ծագած վեճերը լուծվում են բանակցությունների միջոցով: Համաձայնություն ձեռք չբերելու դեպքում վեճերը լուծվում են դատական կարգով:

3.4. Սույն Համաձայնագիրը կազմված է 2 թերթից, հայերեն լեզվով, կնքվում է երկու օրինակից, որոնք ունեն հավասարազոր իրավաբանական ուժ, յուրաքանչյուր Կողմին տրվում է մեկական օրինակ: Սույն Համաձայնագրի № 1,2 Հավելվածները բաղկացած են 1 թերթից և հանդիսանում են Համաձայնագրի անբաժանելի մասը:

3.5 Սույն Համաձայնագրով նախատեսված՝ Պատվիրատուի իրավունքներն ու պարտականություններն իրականացնում է ՀՀ ՊՆ նյութատեխնիկական ապահովման դեպարտամենտը, իսկ պատասխանատու ստորաբաժանում է հանդիսանում ՀՀ ԶՈՒ թիկունքի վարչությունը:

4. Կողմերի հասցեները, բանկային վավերապայմանները և ստորագրությունը:

ՊԱՏՎԻՐԱՏՈՒ	ԿԱՏԱՐՈՂ
ՀՀ պաշտպանության նախարարություն	«Կապանի հաց» ՍՊԸ
ք. Երևան Բագրևանդի 5	ք. Կապան, Ա. Մանուկյան 9.
ՀՀ ՖՆ աշխատակազմի գործառնական վարչություն	«Արդշինբանկ» ՓԲԸ, Կապանի մ/ճ
Հ/Հ 900011144079	Հ/Հ 2470801407800000
ՀՎՀՀ 02522157	ՀՎՀՀ 09412411
ՀՀ պաշտպանության նախարարի տեղակալ	տնօրեն
Մ. ՂԱՄԲԱՐՅԱՆ	Ռ. ԱԹԱՋԱՆՅԱՆ

Հավելված N 1
№ ՀԲՄԾՁԲ-7/2-1 գնման պայմանագրի N3 համաձայնագրի

ԳՆՄԱՆ ԺԱՄԱՆԱԿԱՑՈՒՅՑ

Հ/հ	Հացաթխման ծառայության մատուցումը ըստ տարածաշրջանների	Չ/մ	Քանակը	Մեկ միավորի գինը /ՀՀ դրամ/	Ընդհանուր Գումարը /ՀՀ դրամ/	Ծառայությունների մատուցումը ըստ կիսամյակների 2019թ.
						1-ին կիսամյակ
1	**Կապանի տարածաշրջան, այդ թվում**	կգ	**51000**	**100**	**5100000**	**51000**
1	Երիցվանք - 83117 զորամաս	կգ	2250	100	225000	2250
2	Փայլասար - 83117 զորամաս	կգ	750	100	75000	750
3	Կապան - 54122 զորամաս	կգ	40800	100	4080000	40800
4	Բարեկամավան - 50869 զորամաս	կգ	7200	100	720000	7200

Հավելված N 2
№ ՀԲՄԾՁԲ-7/2-1 գնման պայմանագրի N 3 համաձայնագրի

ՎՃԱՐՄԱՆ ԺԱՄԱՆԱԿԱՑՈՒՅՑ

Հ/հ	Հացաթխման ծառայության մատուցումը ըստ տարածաշրջանների	*Նախատեսվում է ֆինանսավորել 2019թ. ըստ ամիսների, բայց ոչ ուշ քան 20.12.2019թ.								
		ապրիլ	մայիս	հունիս	հուլիս	օգոստոս	սեպտեմբեր	հոկտեմբեր	նոյեմբեր	դեկտեմբեր
1	**Կապանի տարածաշրջան, այդ թվում**	**2550000**	**5100000**	**5100000**	**5100000**	**5100000**	**5100000**	**5100000**	**5100000**	**5100000**
1	Երիցվանք - 83117 զորամաս	112500	225000	225000	225000	225000	225000	225000	225000	225000
2	Փայլասար - 83117 զորամաս	37500	75000	75000	75000	75000	75000	75000	75000	75000
3	Կապան - 54122 զորամաս	2040000	4080000	4080000	4080000	4080000	4080000	4080000	4080000	4080000
5	Բարեկամավան - 50869 զորամաս	360000	720000	720000	720000	720000	720000	720000	720000	720000

* *Վճարման ենթակա գումարը ներկայացված է աճողական կարգով:* CPV-ի կոդը՝ 98391170/39/15/1

ՊԱՏՎԻՐԱՏՈՒ
Պաշտպանության նախարարություն
ք. Երևան Բագրևանդի 5
ՀՀ ՖՆ գանձապետական գործառնական վարչություն
Հ/Հ 900011144079
ՀՎՀՀ 02522157
Պաշտպանության նախարարի տեղակալ

Մ.ՂԱՄԲԱՐՅԱՆ

ԿԱՏԱՐՈՂ
«Կապանի հաց» ԱՊԸ
ք. Կապան, Ա. Մանուկյան 9.
«Արդշինբանկ» ՓԲԸ, Կապանի մ/ճ
Հ/Հ 2470801407800000
ՀՎՀՀ 09412411
տնօրեն

Ռ. ԱԹԱՋԱՆՅԱՆ